ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՀՐԱՄԱՆ	ՈՐՈՇՈՒՄ
08. 11. 2017թ. Հ. 1286-Ա/2	08.11.2017թ. Հ. 71

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ՎԱՅՔԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԸ, 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի» 63-րդ, 64-րդ, 65-րդ և 66-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» ենթակետի պահանջներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. օգոստոսի 24-ի ««ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան» և «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի քաղաքային պետական հանրակրթական վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպելու, գույք հետ վերցնելու և գույք ամրացնելու մասին» N 1079-Ն որոշման 7-րդ և 9-րդ կետերի հանձնարարականների

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.Հաստատել.

1) «Վայքի ավագ դպրոց» և «ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվեկշիռները՝ 01.11.2017թ. դրությամբ:

2) «ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպության «Վայքի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միացման պայմանագիրը:

3) «ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր(ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության

նախարարության «Վայքի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը:

2. «ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով «Վայքի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

3. Սահմանել «ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Վայքի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպման հետևյալ կարգն ու պայմանները.

1) միացման ձևով վերակազմակերպված «ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության դադարման պետական գրանցումից հետո մեկամսյա ժամկետում «ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից կազմված և սույն հրամանով/որոշմամբ հաստատված փոխանցման ակտի համաձայն «Վայքի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն ընդունում է, իսկ «ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հանձնում է առկա հիմնական և շրջանառու միջոցները, դրամական մնացորդները, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, հաշվարկները:
2) հանձնման-ընդունման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 02.10.2017թ. հ. 1341-Ա հրամանով և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 03.10.2017թ. հ. 112 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովների կողմից, իսկ համապատասխան ակտերն ենթակա են հաստատման Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի կողմից:
3) «ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպված է համարվում վերջինիս գործունեության դադարման մասին պետական գրանցամատյանում գրառման պահից:

4. Ընդունել ի գիտություն «ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հայտարարությունն այն մասին, որ «ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան» պետական ոչ առևտրային

կազմակերպության վերակազմակերպման մասին կազմակերպության պարտատերերը տեղյակ են պահվել և սույն հրամանի/որոշման արձակման օրվա դրությամբ նրանց կողմից առարկություններ չեն ստացվել:

5. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Վայքի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին (Թ. Հակոբյան)՝

1) սույն հրամանն/որոշումն, այլ անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին ներկայացնել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Վայքի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը գրանցելու, ինչպես նաև «ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության դադարման պետական գրանցումը կատարելու համար,
2) ապահովել սույն հրամանով/որոշմամբ հաստատված փոխանցման ակտի համաձայն հանձնում-ընդունում իրականացնելու, աշխատակիցների հետ կնքված պայմանագրերի և համապատասխան փաստաթղթերի վերաձևակերպման, ինչպես նաև սույն հրամանից/որոշումից բխող այլ աշխատանքներ:

ՀՀ կրթության և գիտության նախարար **ՀՀ Վայոց ձորի մարզպետ**

Լևոն Մկրտչյան **Հարություն Սարգսյան**